



*Հրաչյուհի Զաքարյան*

Հավելված  
ՀՀ կառավարության 2009 թվականի  
հուլիսի 16-ի N 938 - ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 հուլիսի 2009 թվականի N 938 - ն

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՄՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՑ  
ՄԵԿ ՈՒՐԻՇԸ ՓՈՒՍԼՈՒՄԵՆԻ ԿՐԳԸ ՀԱՏԱՏՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՄԻՍ 14-Ի  
N 1112-Ն ՈՐՈՇՈՒՄ ՈՒՇԸ ԿՈՐՑՐՄԸ ՃՍՍԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետզուհակա՛մ մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան՝  
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու մասին» N 1112-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2009 թ. օգոստոսի 16  
Երևան

S. ՍԱՐԳՍՅԱՆ

221-10

20

08

09

mk129

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՄՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՑ  
ՄԵԿ ՈՒՐԻՇԸ ՓՈՒՍԼՈՒՄԵՆԻ

I. ԱՆՈՂՆԵՐԻ ՂՈՒԹՅՈՒՆ

1. Սույն կարգի գործողությունը տարածվում է պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա (այսուհետ՝ բուհեր)՝ ամկախ ուսուցման ձևից (առկա, հեռավա), իրականացվող կրթական ծրագրերից (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մասնագիտություններից:

2. Ուսանողը մեկ բուհից մյուսը փոխադրվում է 2 բուհերի ռեկտորների համաձայնությամբ՝ բացառությամբ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված դեպքերի: Փոխադրման մասին ուսանողների դիմումները ընդունվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ներբուհական տեղափոխությունները կատարվում են տվյալ բուհի ռեկտորի հրամանով սահմանված ժամկետներում: Հայաստանի Հանրապետության (այլ պետությունների) այլ պետական բուհերից ուսանողների փոխադրումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատություն կարգավորվում է Հայաստանի Հանրապետության թյան կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի «Ուստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնադրիցը հաստատելու մասին» N 1184-Ն որոշմանը համաձայն կարգով: Ուսանողների փոխադրումը կատարվում է տվյալ մասնագիտության հանար լիցենզիայով սահմանված տեղերը չգերազանցելու պայմանով: Փոխադրված ուսանողները հրամանագրվում են միայն վճարովի համակարգ՝ հաջորդ ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով սահմանված փոխադրմանը մասնակցելու իրավունքով: Փոխադրումներ կատարելիս պետք է պահպանել ուսումնական

ծրագրերի միջև եղած տարբերությունը՝ մեկ ուսումնական տարին չգերազանցելու պարտադիր պահանջը:

3. Չի թույլատրվում բակալավկի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում սովորող ուսանողների փոխադրումը: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների փոխադրումը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո: Բուհերի հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ փոխադրումը թույլատրվում է առաջին կուրսն ավարտելուց հետո՝ առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի, բուհի կողմից սահմանված կարգով:

4. Չի թույլատրվում նպատակային տեղեկում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ մասնագիտությամբ ուսումնառություն:

5. Թեղի կամ լրիվ զինվորական (թաղաքացիական) բարձրագույն կրթություն ունեցող զինծառայողները և Հայաստանի Հանրապետության ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների կուրսամտերը (ունկերիդները), ուկրե իսկական զինվորական ծառայությունից զորացրվել են առողջական վիճակի, տարիքի կամ հաստիքների կրճատման պատճառով, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կարող են փոխադրվել բուհերի համապատասխան մասնագիտությունների առաջին և հաջորդ կուրսեր:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատությունից ուսանող փոխադրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատության ղեկավարի համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի թույլտվությամբ:

7. Ուսանողների փոխադրումը թույլատրվում է, եթե առարկաների կրեդիտների (մոդուլների) 25 տոկոսից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգաթղթների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, չի գերազանցում 8-ը: Մասնագիտության փոփոխմամբ թույլատրվող փոխադրումների նպատակահարմարությունը հիմնավորվում և համաձայնեցվում է ընդունող բուհի կողմից: Օտարերկրյա բուհերից ուսանողների փոխադրման դեպքում

հանձնման ենթակա ստուգաթղթների և քննությունների թվի մեջ չեն մտնում հայագիտական առարկաները:

8. Տարբեր պատճառներով զոյացած առարկայական (մոդուլների) տարբերությունները և առարկաների (մոդուլների) առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգաթղթեր) համարվում են ավարտական պարտքեր, եթե առարկայական (մոդուլների) կրեդիտների տարբերությունը գերազանցում է 30 տոկոսը կամ 18 կրեդիտը: Դրանց ցանկը և ծավալները որոշում է ընդունող բուհը:

9. Չի թույլատրվում պետական հավատարմագրում չունեցող ոչ պետական բուհերից ուսանողների փոխադրումը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհեր:

10. Հավատարմագրված ոչ պետական բուհից ուսանողը պետական բուհ փոխադրվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի թույլտվությամբ՝ ընդունող բուհի ղեկավարի ներկայացմամբ:

11. Բուհերը յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում ուսանողների փոխադրման բոլոր ձևերի վերաբերյալ հաշվետվություն՝ տարվա մամրամասն տեղեկություն՝ ըստ կրթական ծրագրի, ուսուցման ձևի, մասնագիտության և ուսուցման կուրսի փոխադրման:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԻՑ ԲՈՒՎ ՓՈՒՄԱՐԴՈՒՄԸ

12. Ուսանողի՝ բուհից բուհ փոխադրումը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա) իրականացվում է ուսանողի դիմումի համաձայն, որին կցվում է նաև ստուգման գրքույկի՝ բուհի կողմից հաստատված պատճենը:

13. Ուսանողը փոխադրման մասին դիմումը ներկայացնում է իր ուսումնառության բուհի ղեկավարին՝ նրա գրավոր համաձայնությունն ստանալու համար:

14. Ուսանողը ընդունող բուհի ասիստանտ կարգով, ինչպես նաև ընդունող բուհի իրանձանով կարող է փոխադրվել առենտակորման հիմունքով ուսանողի հանձնած քննու-

16. Փոխադրվող ուսանողի հրամանագրումը կատարում է ընդունող բուհի ղեկավարը՝ ուսանողի դիմումը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը և ակադեմիական տեղեկանքն ստանալուց հետո (մինչ այդ ստուգվում է ակադեմիական տեղեկանքի և ստուգման գրքույկի պատճենի համապատասխանությունը):

17. Փոխադրման մասին հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝ « \_\_\_\_\_-ին \_\_\_\_\_ բուհից փոխադրման կարգով ընդունել \_\_\_\_\_ ֆակուլտետի \_\_\_\_\_ մասնագիտության \_\_\_\_\_ կուրս՝ \_\_\_\_\_ ուսուցման ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»: Ընդունող բուհում կազմվում է ուսանողի նոր անձնական գրք: Ուսանողին տրվում են նոր ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

18. Հետևյալից առկա բաժիններ տեղափոխությունները կատարվում են տույն կարգի պահանջներին համապատասխան: Առարկայական տարբերությունները հանձնելու համար սահմանվում է ամիսատական ժամանակացույց, որի ժամկետը չպետք է գերազանցի տվյալ կիսամյակի առկա ուսուցման համար սահմանված ժամկետը:

III. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐԻՑ ՀԱՅԿԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԵՐ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

19. Ուսանողներն օտարերկրյա պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերից Հայաստանի Հանրապետության բուհեր փոխադրվում են վճարովի ուսուցման սկզբունքով: Բացառության կարգով (առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառով) օտարերկրյա բուհ նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներն ընդունող բուհում տվյալ մասնագիտության համապատասխան կուրսում անվճար ուսուցման ազատ տեղերի առկայության դեպքում, ընդունող բուհի ղեկավարի առաջարկությամբ և նախարարության հետ համաձայնեցված, կարող են ուսունմառությունը շարունակել անվճար սկզբունքով:

20. Օտարերկրյա բուհ ընդունվելու կարգը (հարցազրույց, թեստավորում, քննություն, քննությունների քիվը և մրցույթի կարգը), ուսուցման ձևը և համակարգը չեն կարող ազդել ուսանողի փոխադրման գործընթացի վրա:

21. Ընդունող բուհը դրական կարծիքի դեպքում նախարարություն է ներկայացնում փաստաթղթերի փաթեթը (ստուգման գրքույկ կամ ակադեմիական տեղեկանք, բուհերի

թյուների գնահատականների հաշվառման, հարցազրույցի, թեստավորման կամ գիտելիքների ստուգման այլ եղանակներով: Եթե ընդունող բուհում տվյալ մասնագիտությամբ և կուրսում ազատ տեղերի թիվն ավելի քիչ է, քան փոխադրվել ցանկացողների թիվը, ատեստավորման գործընթացից հետո անցկացվում է մրցույթ, որի արդյունքում ընտրվում են ուսունմառությունը շարունակելու համար առավել պատրաստ ուսանողները: Ատեստավորման և մրցույթի անցկացման կարգը ու պայմանները սահմանում է ընդունող բուհը: Մինչև տեղափոխվողների ատեստավորման արդյունքներն ստանալն ընդունող բուհի ղեկավարը իրավասու է ուսանողին ժամանակավորապես հրամանագրելու համապատասխան ակադեմիական խմբում և նրան թույլատրելու մասնակցել ուսունմական պարապմունքներին: Ժամանակավոր հրամանում նշվում են նաև ակադեմիական պարտքերի ցանկը, առարկաների (բաժինների) ծավալները, դրանց ուսունմառության և ակադեմիական պարտքերի մարման ամիսատական ժամանակացույցը: Բացի ատեստավորման գործընթացից՝ ուսանողը պետք է հանձնի գոյացած առարկայական տարբերությունները՝ ընդունող բուհի կողմից սահմանված ամիսատական ժամանակացույցով, մեկ ամսվա ընթացքում, որի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տրվում է հրաման:

15. Ատեստավորման դրական արդյունքի դեպքում ընդունող բուհն ուսանողին տալիս է սահմանված նմուշի տեղեկանք՝ համաձայն ձևի: Ուսանողը նշված տեղեկանքը ներկայացնում է իր սովորած բուհ, որի ղեկավարը եռօրյա ժամկետում տալիս է ազատման մասին հրաման: հետևյալ ձևավերամբ՝ «Ուսանող \_\_\_\_\_ - ը ազատված է \_\_\_\_\_ բուհի փոխադրման կապակցությամբ»: Ուսանողին առձեռն տրվում կամ փոստով առաքվում են ազատման մասին հրամանի պատճենը, սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի փաստաթղթերը և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը: Ուսանողի անձնական գրքում մնում են ազատման մասին հրամանի և բուհի կողմից հաստատված միջնակարգ կրթության ավարտական վկայականի պատճենները, ուսանողական տոմսը, ստուգման գրքույկը և ուղարկված փաստաթղթերի ցանկը:

համաձայնությունը): Փոխարժեքը մասին որոշումն ընդունում է նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:

22. Ուսանողի փոխարժեքը իրականացվում է սույն կարգի 7-րդ, 14-18-րդ և 20-րդ կետերով սահմանված ընթացակարգերով: Եթե ուսանողի անձնական գործն առաքման ենթակա չէ, ապա ընդունող բուհին հղվում է դրա մասին փաստաթուղթ, իսկ ուսանողը հրամանագրվում է իր դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՄՈՒՎԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ  
ՂԵԿՎԱԿՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ընդունող բուհի անկյունային կնիքը,  
ամսաթիվը, գրանցման համարը  
(կամ բուհի ձևաթուղթը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է \_\_\_\_\_ -ին՝ առ այն, որ  
(անունը, հայրանունը, ազգանունը՝ տղիվ)

նրան \_\_\_\_\_ կողմից տրված \_\_\_\_\_  
(բուհի տիպ անվանումը) (ստուգման գրքույկի գրանցման

թիվը և ամսաթիվը) \_\_\_\_\_ ստուգման գրքույկի պատճենի և դիմումի համաձայն

թույլատրվել էր մասնակցել ատեստավորման գործընթացին, որը նա հաջողությամբ անցել է:  
\_\_\_\_\_ -ի փոխարժեքը կիրառվում է \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը)

\_\_\_\_\_ ուսուցչի  
(ընդունող բուհի և ֆակուլտետի տիպ անվանումները, արկա, հեռակա)

կուրս \_\_\_\_\_ մասնագիտության տիպ անվանումը) \_\_\_\_\_ մասնագիտության գծով,

\_\_\_\_\_ սկզբունքով, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության  
(ամվճար, վճարովի)

ակադեմիական վկայականը ներկայացնելուց հետո:

Ռեկտոր \_\_\_\_\_  
(ստորագրությունը) \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

Կ.Տ. \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ 200 Ք.